**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4**

**ՀՀՊԾ-ԷԱՃԾՁԲ-25/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **14 հունվարի 2026թ.**

2026թ. հունվարի 12-ից 14-ը ՀՀ ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23/1 հասցեում գտնվող ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության շենքում տեղի ունեցավ պահնորդական ծառայության ձեռքբերման ՀՀՊԾ-ԷԱՃԾՁԲ-25/26 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Գ. Իգիթյան՝ | ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի մարմնի ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ, |
| Գ. Ղարիբյան՝ | ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ, |
| Կ. Մկրտչյան՝ | ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Գ. Իգիթյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար և «ՓՐՈՄՈՒՈՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր երեք անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ**

1. Ընթացակարգի շրջանակներում (արդյունքում) «ԼԵԳԱԼ 11» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տվյալների իսկության ստուգման մասին:
2. Ընթացակարգը չկայացած հայտարարելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ (ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ) «ԼԵԳԱԼ 11» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ

2026թ. հունվարի 12-ին ժամը 15:00-ին Հանձնաժողովն արձանագրեց,

«ԼԵԳԱԼ 11» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի հրավերի պահանջներին վերջինիս համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են թերի, մասնավորապես՝ չի ներկայացվել օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայողական կամ քաղաքացիական զենք կրելու համապատասխան թույլտվություն (լիցենզիա):

Ընթացակարգի շրջանակներում պահնորդական (անվտանգության և պահակային) ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրով սահմանված է եղել, որ պահնորդական (անվտանգության և պահակային) ծառայությունը (այսուհետ՝ նաև Ծառայություն) անհրաժեշտ է իրականացնել «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքով և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված, պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունում պայմանագրային հիմունքներով աշխատող և կանոնադրական խնդիրներ իրականացնող ֆիզիկական անձանց՝ պահնորդների միջոցով, իսկ պահնորդները պետք է ունենան ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահնորդական գործունեություն իրականացնելու լիցենզիա (որակավորում), ապահովված լինեն ծառայությունն իրականացնելու համար նվազագույն անհրաժեշտ միջոցներով, ինչպես նաև զինված լինեն օրենքով սահմանված կարգով ծառայողական կամ քաղաքացիական զենքով (առնվազն գազային կամ օդամղիչ՝ պահելու և օգտագործելու համապատասխան թույլտվությամբ):

«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մասնավոր պահնորդական կազմակերպությունը պահնորդական ծառայություններ մատուցելու նպատակով զենք է ձեռք բերում և օգտագործում հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց համար՝ «Զենքի շրջանառության կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Նույն օրենքի 16-րդ հոդվածով սահմանվում է պահնորդական կազմակերպության կողմից կիրառվող հատուկ միջոցները:

«Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված են զենքի տեսակները՝ քաղաքացիական զենք, ծառայողական զենք, ձեռքի մարտական հրաձգային զենք (մարտական զենք):

Նույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձինք իրավունք ունեն ձեռք բերելու քաղաքացիական և ծառայողական զենք Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից թույլտվություն ստանալուց հետո:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց կողմից օգտագործվող քաղաքացիական և ծառայողական զենքի տեսակը, ձևը, մոդելը և քանակը սահմանում է Կառավարությունը:

ՀՀ Կառավարության 2016 թվականի հունվարի 29-ի 57-Ն որոշման հավելվածով սահմանված է մասնավոր պահնորդական գործունեության լիցենզիա ունեցող

իրավաբանական անձանց աշխատակիցների կողմից օգտագործվող քաղաքացիական և ծառայողական զենքի տեսակը, ձևը, մոդելը: Նույն որոշման համաձայն՝ ծառայողական օգտագործվող զենքի ձևն է կարճ ակոսափող զենքը, իսկ քաղաքացիական օգտագործվող զենքի ձևը՝ ողորկափող զենքը:

Անհրաժեշտ է փաստել, որ մասնավոր պահնորդական գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց աշխատակիցների կողմից տեխնիկական բնութագրով նշված քաղաքացիական կամ ծառայողական զենքի օգտագործման այլ երկնտրանքի հնարավորություն օրենսդրությամբ ընձեռված չի, հետևաբար քաղաքացիական կամ ծառայողական զենքի օգտագործման համար անձը պետք է ունենա ՀՀ Կառավարության 2016 թվականի հունվարի 29-ի 57-Ն որոշման հավելվածով սահմանված համապատասխան զենքերի օգտագործման թույլտվություն, որը «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տրամադրվում է ՀՀ ՆԳՆ Ոստիկանության կողմից: Ընդ որում, Պատվիրատուն Կարգի 67-րդ կետի կիրառմամբ 08.01.2026 թվականին նաև գրություն էր ուղարկել ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչություն, որով պահանջվել էր հնարավորինս սեղմ ժամկետներում հայտնել, արդյո՞ք «ԼԵԳԱԼ 11» ՍՊԸ-ի կողմից ներկայացված անձինք ունեն օրենքով սահմանված կարգով ծառայողական կամ քաղաքացիական զենք կրելու համապատասխան թույլտվություն (լիցենզիա), թե՞ ոչ: Նշված գրությանն ի պատասխան հայտնել էին, որ նշված կազմակերպությանը զենք պահելու և օգտագործելու թույլտվություն չի տրվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ՝ Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Վերոգրյալով պայմանավորված Հանձնաժողովը նաև արձանագրում է, որ «ԼԵԳԱԼ 11» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել համապատասխան քաղաքացիական կամ ծառայողական զենքի՝ ՀՀ Կառավարության կողմից սահմանված կարգով տրված թույլտվություններ (լիցենզիա), ինչը սահմանված է ոչ միայն տեխնիկական բնութագրով, այլ նաև տվյալ ոլորտը կարգավորող իրավական ակտերով:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2026 թվականի հունվարի 14-ին Հանձնաժողովն որոշեց՝

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը,

2. Ղեկավարվելով Կարգի 67-րդ կետի պահանջներով՝ «ԼԵԳԱԼ 11» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել,

3. Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ նախաձեռնել գործընթաց՝ «ԼԵԳԱԼ 11» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով,

4. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին,

5. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «ԼԵԳԱԼ 11» ՍՊԸ | անբավարար |

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով վերոգրյալից, Հանձնաժողովն որոշեց՝

1. Ընթացակարգի շրջանակներում հաղթող ճանաչված մասնակից «ԼԵԳԱԼ 11» ՍՊԸ-ի հետ պայմանագիր չկնքել,

2. Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերի պահանջներով՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած,

3. Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Գ. Իգիթյան ____________________

Հանձնաժողովի անդամներ՝

Գ. Ղարիբյան ____________________

Կ. Մկրտչյան ____________________

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ. Էլոյան ____________________